

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Հ Ա Յ Ր Ի Կ Ը

ԵՒ

ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՏԵԼԼԻԳԵՆՑԻԱՆ

Վեհափառ Հայրիկի գաղափարները գիւղատնտեսութեան կարևորութեան մասին գիւղացի կրթւած սերնդի համար՝ լաւ բնորոշում է Հայրիկի նորերս արտասանած մի քարոզը ս. Էջմիածնի ձեմարանի աշակերտներին: Մենք այստեղ առաջ ենք բերում այդ քարոզը այն ճշգրտութեամբ, որքան այդ յաջողւել է ներկայ եղողներին մէկին ¹⁾ թարմ տպաւորութեան տակ վիրարտադրել: Ապա, իբր նոյն խնդրին հետ կապ ունեցող՝ առաջ կը բերենք մեր աշխատակից պ. Սթանասեանի մի յօդածը, տպւած «Տարազ» շաբաթաթերթում (№ 46):

I

Հ Ա Յ Ր Ի Կ Ի ՔԱՐՈԶԸ

«Ես այս րոպէիս շրջեցի մի քանի տեղեր և դուայ որ այստեղ կան մշակելու լաւ հողեր. միւս տարի ես այստեղ երկրագործական ուսումնարան պիտի բաց ընեմ և ձեր մոռաւոր ու բարոյական աշխատանքի հետ պիտի կապեմ և ֆիզիքական աշխատանքը:

«Իւր, գիւղական և քաղաքական որդիներ, դուք չպիտի բաւականանաք միայն գիտութիւններով, այլ մի ձեռքում պիտի բահը

¹⁾ Պր. Յակոբ Յակոբեան:

բռնած լինէք, միւս ձեռքում գրիչը, ծիշդ անպէս, ինչպէս ես. եւ մի օր ես արժանացայ մի անյախի նւէրի, ուր մի կողմին նկարւած էին երկրագործական գործիքներ, իսկ միւս կողմին՝ գրիչ:

«Մօտերքումս ստացայ մի նամակ մի տղայից, որը այստեղ ձեմարանումն է սովրել. նամակի մէջ այդ տղան կը գրէ հետեւեալը թէ՛»

«Հալրիկ, երբ ես դեռ ձեմարան չէի մտած, գիւղում մշակում էի իմ հօր արտերը, արածացնում էի հանդերում մեր նախրը, ուտում էի մեր փրթուշը ու բաւականանում, նոյն իսկ ոտներիս չարըխների տակը պոկւած էր և ես բոբիկ էի ման գալիս:

«Մտնելով ձեմարան իմ կեանքս սկսեց փոխել. ինձ տեցին փափուկ մաշակալ, մաքուր հագուստ և մսից տաք կերակուրներ. Այժմ երեք ատրի սովորած լինելով արդ կեանքին, իսկ հիմա դուրս գալով ձեմարանից՝ չեմ կարողանում հաշուել ներկայ կեանքիս պայմանների հետ. միս չուտելով իմ ուղեղս կը չորնայ»: !?

«Հա, այդ տղան ասում է, — ուղեղս կը չորնայ միս չուտելուց, — (չգիտեմ՝ բնախօսութեան մէջ ասանկ բան մը կայ որ, միս չուտելով, մարդու ուղեղ կը չորնայ). (ծիծաղ!) (Նրեմիա եպիսկոպոս, ինչպէս կ'երևի՝ սրանց դուք միս ուտել շատ էք սորովեցուցած. (ծիծաղ):

«Ընդունում, երբ ես կը պտտէի, անտեղ տեսայ մի ընկերութիւն, ուր մեզ պէս ալ կաթ, իւղ, պանիր և բանջարեղէնք կուտէին, սակայն նորանց ուղեղը չընչորցաւ, անոնք մի ազդ են, որ աշխարհիս մէջ ամենագործնական խելացի և աշխատասէր մարդիկ կըլլան: Հա — վատ յոգնեցայ»:

Նստեց Հալրիկ, նորից լուզած ցատկեց տեղից շարունակելով.

— «Հիմա դուք, ուսում ստանալով, կ'աշխատիք քաղաքներ վազել վարժապետութիւն անել և այլն. ախար, ամեն միւր ձեզնից ուսուցիչ մը կրնայ ըլլալ. ամեն մարդ, ամեն ոք ձեզնէ պիտի իւր հակումը և ընդունակութիւնը զարգացնի. ատոր կասեն անհատականութիւն. և երբ շատերը ձեզնէ կը գնան գիւղ, հողեր մշակելու, մենք, բացի ինտիլիգենտ ուսուցիչներ ունենալուց, կ'ունենանք և ինտիլիգենտ գիւղացիներ:

«Մենք ունենք հողեր, գեղեցիկ, պարարտ դաշտեր. Լորիս-Մելիքով հիացել էր Ալաշկերտի հողերով. նա ըսաւ՝ — Ալաշկերտի հողերը աշխարհիս մէջ ամենապառուսկան, ամենաբերրի հողերն են,

խիկ մեր Ալաշկերտցիք չեն մշակում հողը, թողնում են և, զանազան հանգամանքներից զրկւած, զաղթում են մեր երկիրը... (Ռուսաստան. ծան. խմբ.): Հնա, այդ հողերը, այդ Ալաշկերտը (բարձրացնելով ձեռքը դեպի Մասիսը) հրաշալի երկիր է: Այստեղ Հայրիկի ձայնը խիտ լուրջ, խեղդակց կոկորդում և իր աչքերի ջրակալելը զգալով՝ հուպուկեց նրանց, վաղեց արտասուքը և, գետին խոնարհեցնելով այդ հրաշալի աչքերը, շարունակեց.

— Դուք, Ալաշկերտի կողմից եկողներ, պիտի չվազէք քաղաքների, այլ ձեր աշխարհ, այնտեղի հողերը մշակելու:

«Հնա, դուք քաղաք մի դնաք, դուք գիւղ պիտի գնաք, գիւղացին ամենաբաղդաւոր մարդն է, իսկ հողը ամենաթանգագին գանձը աշխարհիս մէջ:

«Թող բոլորն ալ ձեզնէ վարժապետութեան վրայ չմտածեն:

«Պոլսում պատրիարք եղած Ժամանակ ինձ մօտ եկան Իւսկիւտարի, Պերայի և՛ այլ ուսումնարաններից բարձր ուսում աւարտած 4 - 5 երիտասարդներ և, զանգատուելով ինձ իրենց վիճակից, կը խնդրէին՝ «Հայրիկ, պաշտօն չունինք, ապրելու միջոց չունինք, օգնեցէք մեզ...»—Անտեղ շատ ուսուցիչներ կան, որոնք սոված ցամաք հացի անգամ կարօտ՝ ձեռքերը ծոցին ծալած՝ պաշտօն, նոյն իսկ հասարակ պաշտօն կը փնտռեն:

«Նոցանից մէկին հարցուցի՝ «Ում տղան ես.—ասաւ՝ դերձակ Մարտիրոսին. միւսի հարցուցի՝ «ասաւ կօշիակար Սիրակիսի. մէկն ասաւ՝ ես լաւ մաթեմատիկոս եմ, միւսը թէ լաւ լեզուագէտ և այլն, բայց պաշտօն չունինք, հաց չունինք, հասարակ ծառայութեան կուզենք մտնել՝ ադ ալ չկայ, և չեն ընդուներ, սոված կը մեռնենք: Հնա, հապա եթէ նրանք երկրագործութիւն զիտենային՝ դուք է կը գնային հող մշակելու և կ'ապրէին:

«Ասել կուզեմ, որ գիտութիւնը, ուսումը՝ հող մշակելու հետ պիտի որ զուգընթաց ու հաւասար գնաց:

«Դուք ալ պիտի համ ուսում առնէք, համ հող մշակելը սորվիք, կիմանաք. հնա, հապա ադոր համար ես հոգած եմ. հիմիկուց յանձնած եմ տպարանին «Պապիկ և Թոռնիկ» զրւածքս. ադոր մէջ պապիկը թոռնիկին խրատներ, քարոզներ կուտայ հող մշակելու. կարգացէք և հասկացէք: Հնա, գիւղացին ամենաբաղդաւորն է...

«Դէհ, քնաք բարեան, Հայրիկի խօսքերը լաւ միտ պահեցէք։
Եւ նա կրկին նստեց լոգնած, ապա լանկարծ կրկին վեր թռաւ
աթոռից, ուղղեց և, ձեռքը մեկնելով ասաց.

— «Աս ալ իմ ամբիօնն է լինելու հրապարակախօսութեան (Հայ-
րիկ նստած էր ձեմարանի ձախ մուտքի սանդուղքների վրայ դէպի ալդին),
եւ այստեղից դեռ շատ պիտի խօսիմ ձեզ հետ, միայն Հայրիկի
խօսքերը չմոռնաք, լաւ միտ պահեցէք, Ասուած օրհնէ ձեզ։ Ե՛հ
ինչ լաւ բացօդեայ տեղ է այստեղ։ Շաբաթ օր կալանալիք հան-
դէսն ալ այստեղ կատարեցէք։

Տեսչի օգնականը որ Հայրիկին առաջնորդում էր զբօսանքի ժամա-
նակ, միջամտեց թէ՛ վեհափառ Տէր, ցուրտ կը լինի դուրսը թէ Զեզ
և թէ աշակերտների համար։

— «Ե՛հ, ինչ ցուրտ. այդ ոչինչ լաւ եղանակին։

«Դէհ, Հայրիկի խօսքեր չմոռնաք։

Ասեց ու անցաւ իւր իսկ պառակէրով երկու առանձին կարգերով
կանգնած քաղաքացի և գիւղացի աշակերտների միջով։ Զեռքը դէպի աջ
մեկնելով, ուր քաղաքացիներն էին կանգնած, ասաց հանաքով և ժպտոք
երեսին՝

— «Նայէք, քաղաքացիներ, իմ գիւղացիներին չդիպէ՛ք։

Այս մի անպիսի ումորով արտասանեց Հայրիկը, որ բոլոր ներ-
կալ եղող եպիսկոպոսներ և ուսուցիչները պիտի ծիծաղեցնին։ Միծաղեց և
Հայրիկ, որ աննման էր ։)

II

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԻԿԸ ԵՒ ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՒՍՈՒՄԸ

Այն վեհ գաղափարներից և նպատակներից մինը, որ զբաղեց-
րել է Վեհ. Հայրիկին իր բազմամեայ գործունէութեան ժամանակ
գիւղատնտեսութիւնը—երկրագործութիւնը։

Նա, իր կեանքի մեծ մասը անցնելով մեր ժողովրդի երկրա-
գործ դասակարգի մէջ, քաջ տեղեակ է այն բոլոր հանգամանքնե-
րին և դրութիւններին, որոնցով շրջապատուած է հայ-երկրագործի
աշխատանքը։ Այդ ծանօթութիւնները առաջացրել են Հայրիկի մէջ
անսահման սէր դէպի այդ դասակարգը և դրա պարապմունքները։

Հայրիկը միշտ անձամբ օգնել է հայ գիւղացուն աւելի քան մի ուրիշ հայ անհատ և միշտ իր սրտառուչ և խորիմաստ քարոզներով հրաւիրել է մեր միւս զասակարգերին օգնութեան ձեռք կարկառել հայ երկրագործին: Հայրիկը համոզւած է եղել, որ այդ օգնութիւնը միմիայն այն ժամանակ կարող է տեղի ունենալ և արդիւնաւոր լինել, երբ նախ հայ գիւղացին իր հողի վրայ կը նստի և ապա՝ երբ նորագոյն եղանակներով կը զբաղւի այդ հողի մշակութեամբ: Սակայն Հայրիկը սրտաբուլի արցունքներ թափելով ականատես է եղել, թէ ինչպէս հայ ժողովրդի բարօրութեան այդ մեծ յինարանը՝ հողը, շնորհիւ Տաճկահայաստանում զոյւթիւն ունեցող քաղաքական և տնտեսական անտանելի պայմանների, կամաց-կամաց դատարկուած է, իսկ դրանց մշակողները թողնում են հայրենի օջախը և օտար աշխարհ են դաղթում, ուր համալուծեան տաժանելի աշխատանքի և ամեն տեսակ անտանելի պայմանների մէջ իրանց բախտն են որոնում: Հայ գիւղացու Հայրիկը երբէք չի դադարել իր հօր, մերթ բարկութեամբ, մերթ արտասուքով, մերթ վշտով լի ձայնը բարձրացնել այդ սարսափելի պանդխտութեան հոսանքի դէմ: Սակայն իզուր:

Կատարելագործւած երկրագործութիւնը եղել է Հայրիկի ամենասիրելի պարագմունքներից մինը. դեռ ևս սրանից 25—30 տարի առաջ նա փորձել է եւրոպական նորագոյն գիւղատնտեսութեան ծիլերը հաստատել հայ հողում. այդ նպատակով նա, որպէս Վարագայ վանքի վանահայր, բերել է տալիս Եւրոպայից նորաձե, յարմար երկրագործական մեքենաներ, գործիքներ, որով մտածում է նախ վանքի հողերը մշակել և ապա շրջակայ հայ գիւղացիներին երկրի մշակութեան աւելի հեշտ և արդիւնաւոր միջոցների հետ ծանօթացնել: Հայրիկը երկու անգամ Եւրոպայում արած ճանապարհորդութեանց ժամանակ իր սրտես աչքով դիտել է ամեն ինչ իր շուրջը, հետաքրքրւել է ամեն բանով և մանաւանդ եւրոպական երկրագործութեամբ: Եւրոպայի գիւղացու խնամքով մշակւած դաշտերը, նրա պարարտ և ուժեղ անասունները, նրա մաքուր տունն ու դոմը, նրա բարեկեցիկ կեանքը—Հայրիկի մէջ նախանձ է առաջ բերել, երբ նա չիշել է իր երկրի դրութիւնը, և այդ բոլորը իր հայ թշւառ երկրագործի կեանքի հետ համեմատել: Բարձրացնել

հայ երկրագործի տնտեսական դրութիւնը, նրան փոքր ի շատէ անկախ դարձնել, լուսաւորել նրա միտքը—ահա Հայրիկի մշտական մտածումնքների մէջ ամենից զբաղեցնողը: Դեռ ևս Երուսաղէմում, հեռու հայրենիքից, որպէս ուխտաւոր—կղզիացեալ, նրա երեւակայութիւնը հայ գիւղացու տնտեսական թշւառ վիճակի վրայ է պտտել և գրիչը առնելով՝ «Դրախտի Ընտանիքի» հետ միասին «Պապիկ և Թոռնիկ» գիւղատնտեսական գրեածն է մշակել, որը և հայ գիւղացուն, հայ երկրագործին է նւիրել:

Որպէս ընդհանուր հայոց հայրապետ սուրբ Էջմիածին ուղեորութեան ժամանակ Վիեննայում հայ գիւղատնտես ուսանողներին խրախուսել է Հայրիկը և խօսք առել, որ նրանք ուսում առնելուց յետոյ հայրենիք դառնան, գիւղ գնան, հայի հողերը մշակեն, հայի բնական արդիւնաբերութիւնը աւելացնեն: Նոյն մտքով նա խօսել է Տփլիսում՝ Ներսիսեան դպրոցի գիւղացի աշակերտներին խօսքը ուղղելով. «Գիւղացուն գիւղը սիրել տւէք, որ այնտեղ գնաց, այնտեղ մնայ, քաղաքացուն քաղաքը՝ և այլն և այլն: Նոյն մտքով Վեհ. Հայրապետը Տփլիսից Երևան տանող ճանապարհին իրան դիմաւորող բոլոր գիւղացիների հետ է խօսեցել, իսկ Երևանում՝ քաղաքացիներին ասել է խմում եմ՝ այն մարդու կենացը, որ դաշտեր, լեռներ կը բնակի, բայց որի աշխատանաց արդիւնքը հասարակ մարդոց սեղաններէն սկսեալ մինչև իշխանաց և թագաւորաց սեղանները կը հանւի, որ երկիրը կը հերկէ և այս հաց կը պատրաստէ, որ այգիներ կը մշակի և անոյշ մրգեր և բանջարեղէն՝ կը հասուցանէ. ով է այդ մարդը. դա է հայ մշակը, հայ երկրագործը, հայ գիւղացին... Ուրեմն կեցցես, մշակ դասակարգ: Մեր վերջին դարու պատմութեան ընթացքում գուցէ առաջին անգամն է որ հայ Հայրապետը քաղաքացոց սեղանի առաջ նստած հայ մշակին կը յիշէ և դա կարող էր միայն Հայրիկը լինել: Հայրիկը հրաւիրում է քաղաքացոց օգնել գիւղացիներին, որովհետև նրանք ամենից թշւառ են. «ես ալ գիւղացիէն եմ՝ ծնել, և նրան շատ կը սիրեմ, աւելի քան ուրիշներին, փող և լոյս տւէք նրան, որ նա էլ ձեզ հաց տայ»:

Այս բոլորից յետոյ այլ ևս զարմանալի չէ որ Հայրիկը ամեն տեղ քարոզում է և ձգտում է, որ գիւղացոց զաւակը կամ գիւղի

մէջ ծառայելու քահանան և ուսուցիչը ստանայ գիւղատնտեսական
ուսում:

Հայ գիւղական քահանան կամ ուսուցիչը միայն այն ժամա-
նակ կը հասկանայ գիւղացու ցաւերը և մխիթարիչը կը լինի, երբ
ինքն ևս կը զբաղւի երկրագործութեամբ, գիւղատնտեսութեամբ:
